

Հաստատված է՝

«Շիրակի Մ. Նալբանդյանի անվան

պետական համալսարան»

հիմնադրամի գիտական խորհրդի

2018թ. հունիսի 22-ի նիստում

խորհրդի նախագահ՝ ռեկտորի պարտականություններ կատարող՝

Ե.Ս. Սերոբյան



ՄԱՆԿԱՎԱՐԹԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԻ ԻՐԱՎԱՍՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ
ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԿԱՐԳ

Գյումրի 2018

1. Ընդհանուր դրույթներ

- 1.1. Մանկավարժական խորհուրդը հանդիսանում է «Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարան» հիմնադրամ քոլեջի (այսուհետ՝ Քոլեջ) ուսումնական և դաստիարակչական աշխատանքների բարելավման, ուսուցման որակի կատարելագործման հիմնական օղակը:
- 1.2. Մանկավարժական խորհուրդը կազմավորվում է մանկավարժական կոլեկտիվի օգոստոսյան առաջին նիստում:
- 1.3. Մանկավարժական խորհուրդը ձևավորվում է ռեկտորի հրամանով՝ մեկ ուսումնական տարի ժամկետով:
- 1.4. Մանկավարժական խորհրդի անվանական կազմը արձանագրվում է մանկավարժական խորհրդի արձանագրությունների մատյանում:

2. Խորհուրդի հիմնական խնդիրները

- 2.1. պետական կրթական չափորոշիչին համապատասխան ուսումնական ծրագրերի իրագործման հարցերը՝ ուսանողների հակումներին ու ընդունակություններին, նրանց կյանքի և առողջության պահպանմանը համապատասխան,
- 2.2. ուսուցման բովանդակության, ուսանողների ուսումնառության որակի, նրանց հետ տարվող արտալսարանային աշխատանքների կազմակերպման հարցերը,
- 2.3. պետական կրթական չափորոշիչների և ուսումնական ծրագրերի, ուսումնական պլանների, նախագծերի, ինչպես նաև նոր փորձարկվող դասագրքերի, ձեռնարկների և այլ նյութերի քննարկում,
- 2.4. կրթական գործընթացին օժանդակող խորհրդատվական, (տեղեկատվական, հոգեբանական, սոցիալ – մանկավարժական, հատուկ մանկավարժական, մեթոդական, առողջապահական և այլ բնույթի) ծառայություններ մատուցելու հարցը,
- 2.5. Քոլեջի աշխատանքային ռեժիմի և աշխատանքային շաբաթվա տևողության մասին հարցերը
- 2.6. Քոլեջի ուսանողների փոխատեղման (ռոտացիայի) հարցերը
- 2.7. Քոլեջի կանոնադրության և կարգապահական կանոններով սահմանված կարգով ուսանողի նկատմամբ կարգապահական տույժ կամ խրախուսում կիրառելու հարցերը,
- 2.8. Ամբիոնի վարիչների թեկնածությունների ներկայացման հարցը,
- 2.9. Քոլեջի ուսումնական գործընթացին վերաբերող այլ հարցեր:

3. Խորհուրդի կառավարումը

- 3.1. Մանկավարժական խորհրդի կազմը ձևավորվում է հետևյալ սկզբունքով.
- մանկավարժական խորհրդի կազմում ընդգրկվում են տնօրենը, ուսումնական և դաստիարակչական աշխատանքների գծով տնօրենի տեղակալները, ուսումնամեթոդական խորհրդի նախագահը, կուրսղեկները, ֆիզղեկը, զինղեկը, գրադարանի և պրակտիկայի ղեկավարը, արհմիութենական կոմիտեի նախագահը, ամբիոնի վարիչները, կարիերայի կենտրոնի ղեկավարը, քարտուղարը, կադրերի գծով տեսուչը և գլխավոր հաշվապահը,
 - քոլեջի բոլոր դասախոսները համարվում են մանկավարժական խորհրդի անդամներ
 - խորհուրդի աշխատանքների անմիջական ղեկավարումն իրականացնում է Խորհրդի նախագահը՝ քոլեջի տնօրենը կամ ուսումնական աշխատանքների գծով փոխտնօրենը
- 3.2. Խորհրդի կազմից բաց քվեարկությամբ ընտրվում է Խորհրդի գործավար, որը վարում է արձանագրությունները և Խորհրդի գործավարությունը,
- 3.3. Խորհրդի անդամները իրավունք ունեն հանդես գալու առաջարկություններով, մանկավարժական նախաձեռնություններով,
- 3.4. Խորհրդի անդամները պարտավոր են մասնակցել Խորհրդի նիստերին, ակտիվ մասնակցություն ցուցաբերել նրա աշխատանքներին:
- 3.5. Մանկավարժական խորհրդի նիստերը գումարվում են.
- ուսումնական տարվա սկզբին,
 - յուրաքանչյուր կիսամյակի ավարտին,
 - անհրաժեշտության դեպքում:
- 3.6. Քոլեջի տնօրենը մանկավարժական նիստից առնվազն երեք օր առաջ պատշաճ կերպով տեղեկացնում է քոլեջի աշխատակիցներին մանկավարժական խորհրդի նիստի անցկացման տեղի, ժամի և օրակարգի մասին:
Մանկավարժական խորհրդի որոշմամբ նիստի օրակարգում կարող են կատարվել փոփոխություններ:
- 3.7. Մանկավարժական խորհրդի նիստը իրավագոր է, եթե դրան մասնակցում են մանկավարժական խորհրդի անդամների ընդհանուր թվի կեսից ավելին, իսկ խորհրդի ընտրության ժամանակ՝ առնվազն 2/3 – ը: Որոշումներն ընդունվում են քվեարկությանը մասնակցած մանկավարժական խորհրդի անդամների

- ձայների մեծամասնությամբ: Մանկավարժական խորհրդի յուրաքանչյուր անդամ ունի մեկ ձայնի իրավունք: Ձայնի փոխանցումն արգելվում է,
- 3.8. Մանկավարժական խորհրդի անդամների ձայների հավասար բաժանվելու դեպքում ընդունվում է տնօրենի առաջարկը,
- 3.9. Մանկավարժական խորհրդի նիստը արձանագրվում է և եռօրյա ժամկետում, ստորագրվում և վավերացվում է խորհրդի նախագահի կողմից: